Երկու ոտք ապրող,
երկու աչքով՝
հիանալի Վարպետին

ԱՐԱ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

Երկու ոտք ապրող, երկու աղջիկ՝ չհաղկած Վրարարը

Իմ անհավանական արկածներն
Իեն Գիլանի և Թոնի Այոմիի հետ

new mag

ԵՐԵՎԱՆ
2020

Bookmark

ՀՏԴ 78.036
ԳՄԴ 85.318
Թ 141

Թ 141 Թադևոսյան Արա
Երկու ռոք աստղ, երկու աղջիկ՝ չհաշված Արարատը/
Ա. Թադևոսյան.- Եր.: Newmag, 2020.- 172 էջ:

Այս գիրքն ամենախենթ երազանքն իրականություն դարձնելու մասին է: Երազանքն այնքան համարձակ էր, որ անիրագործելի էր թվում: Այդպես լրագրող Արա Թադևոսյանը մի օր որոշում է Հայաստան հրավիրել համաշխարհային այն ռոք աստղերին, որոնք ժամանակին օգնեցին Սպիտակի երկրաշարժից տուժած երկրին:

Այս գիրքը երազանքը կյանքի կոչելու յուրօրինակ ճանապարհային քարտեզ է: Ինչպե՞ս սկսել, ինչի՞ց, ի՞նչ անել, երբ հեռախոսազանգերն ու էլնամակները մնում են անպատասխան, երբ բոլորը՝ ընկերներից մինչև հովանավորներ, թերահավատ են քո գաղափարի հանդեպ, երբ նախապես ծրագրվածը վերջին 24 ժամում գլխիվայր փոխվում է: Ինչ է պետք անմիջապես անել, եթե աստղը, ի վերջո, ժամանել է, բայց ատամնացավով:

Արա Թադևոսյանն անկեղծորեն ու մանրամասն նկարագրում է նորանկախ Հայաստանի թերևս ամենաաստղային նախաձեռնության ետնաբեմը, որը կարող է հետաքրքրել ոչ միայն ռոքի սիրահարներին, այլև բոլոր նրանց, ովքեր ունեն անիրագործելի թվացող երազանքներ, դրանց հասնելու աննահանջ կամք ու անսպառ եռանդ:

ՀՏԴ 78.036
ԳՄԴ 85.318

Գրքի գլխավոր գործընկեր՝
IDBank
www.idbank.am

ISBN 978-9939-884-05-9
© Արա Թադևոսյան «Երկու ռոք աստղ, երկու աղջիկ՝ չհաշված Արարատը»
© «Նյու Մեգ» ՍՊԸ, 2020
Հեղինակի լուսանկարը՝ Հրանտ Խաչատրյանի/PanPhoto
Այս գրքի հրատարակության բոլոր իրավունքները պատկանում են
«Նյու Մեգ» ՍՊԸ-ին և «Մեդիամաքս Մեդիա Քոմփանի» ՍՊԸ-ին:

Բովանդակություն

	Գործող անձինք	9
	Նախաձեռնություններ	13
1.	Արարատի հակառակ կողմը	15
2.	Առաջին այցը, առաջին համերգը և առաջին հայ փրոմոութերը	18
3.	Երաժշտության վերադարձը	24
4.	Բայդենը, Բաբաջանը, Վիգեն Սարգսյանն ու Rock Aid Armenia-ն	28
5.	Ոչ սովորական դեսպանը	40
6.	Ամառային երեք հուշ և ատամնացավ	47
7.	Թոնի Այոմիի հանդիպումը երկրպագուհու հետ	54
8.	«Օկտետը» և ՀՕՖ-ը	57
9.	Ուղևորությունը դեպի Գյումրի և պարգևատրումը Երևանում	61
10.	Աղետը	66
11.	Փեթ Բեշը և Այոմիի կատակը	71
12.	Արամ Ասատրյանը և Hay Superstar-ը	76
13.	Սուրեն Առուստամյանն ու կնքահայրը	90
14.	Շրթհարմոնն ու ֆիլմը	96
15.	Դեպի Sarm Studios ամեն գնով	98
16.	«Հափազանց լավ՝ իրական լինելու համար»	107
17.	Այոմին բեմին ու «Եվրատեսիլում»	111
18.	Փող հավաքելը հեշտ չէ	116
19.	Հայերի «պաշտոնական» բարեկամը	121
20.	Ողբերգությունը և Գիլանի նամակը	124
21.	Մենք կրկին հավաքվում ենք	126
22.	Արարելու և ապրելու սերունդը	129
	Երախտագիտության խոսք	135
	Լուսանկարների հեղինակներ	137

Bookmark

Նվիրում եմ ընկերոջս՝
Ջոն Դիին

Bookmark

Գործող անձինք

Իեն Գիլան (Ian Gillan, ծնվ. 1945 թ.) – Deep Purple խմբի երգիչ: Համարվում է ռոքի պատմության մեծագույն վոկալիստներից մեկը: Կոթողային է համարվում *Child in Time* երգի նրա կատարումը: *Jesus Christ Superstar* ռոք օպերայում կատարել է Հիսուս Քրիստոսի պարտիան:

Թոնի Այոմի (Tony Iommi, ծնվ. 1948 թ.) – կիթառահար, Black Sabbath խմբի հիմնադիր անդամ: Համարվում է heavy metal ոճի «կնքահայրը»: Guitar Worlds ամսագրի կազմած metal ոճի բոլոր ժամանակների 100 լավագույն կիթառահարների ցանկում 2004 թ. զբաղեցրել է առաջին հորիզոնականը:

Բրայան Մեյ (Brian May, ծնվ. 1947 թ.) – կիթառահար, Queen խմբի հիմնադիր անդամ: 2008 թ., գրեթե 40 տարվա դադարից հետո, դոկտորական թեզ է պաշտպանել աստղաֆիզիկայի ոլորտում: Այդ գործում նրան օգնել է ընկերը՝ աստղաֆիզիկոս Գարիկ Իսրայելյանը:

Bookmark

Ջոն Դի (Jon Dee, ծնվ. 1965 թ.) – Rock Aid Armenia (Ռոքն օգնում է Հայաստանին) նախաձեռնության հիմնադիր: 1991-ից բնակվում է Ավստրալիայում: Do something բարեգործական կազմակերպության համահիմնադիրն ու նախագահն է: Նախաձեռնել է Ավստրալիայի National Tree Day միջոցառումը, որի շրջանակում 2 մլն կամավորներ 13 մլն ծառ են տնկել:

Փեթ Քեշ (Pat Cash, ծնվ. 1965 թ.) – ավստրալացի թենիսիստ: 1987 թ. հաղթել է Ուիմբլդոնի մրցաշարում: 80-ականների կեսին աշխարհի 4-րդ ռակետն էր: Ապրում է Լոնդոնում, զբաղվում մարզչական աշխատանքով: Ավստրալիայում գործում է նրա հիմնադրած Թենիսի միջազգային ակադեմիան:

Ջեֆ Դաունս (Geoff Downes, ծնվ. 1952 թ.) – ստեղնահար, Asia, Yes խմբերի անդամ: Գինեսի ռեկորդների գրքում է՝ մեկ բեմական ելույթի ընթացքում 28 ստեղնային գործիք նվագելու համար:

Ջոն Լորդ (Jon Lord, 1941-2012) – Deep Purple խմբի հիմնադիր-անդամ, ռոք երաժշտության ամենավառ աստղերից մեկը:

Նիկո Մակբրեյն (Nicko McBrain, ծնվ. 1952 թ.) – Iron Maiden խմբի թմբկահարը:

Bookmark

Ֆիլ Բենֆիլդ (Phil Banfield, ծնվ. 1953 թ.) - Իեն Գիլանի մենեջերը:

Ռալֆ Բեյքեր (Ralph Baker, ծնվ. 1949 թ.) - Թոնի Այոմիի մենեջերը:

Սալի Դեյ (Sally Day, ծնվ. 1983 թ.) - Իեն Գիլանի օգնականը:

Թրեյսի Մենաժ (Tracy Menage) - Թոնի Այոմիի օգնականը:

Չարլզ Լոնսդեյլ (Charles Lonsdale, ծնվ. 1965 թ.) - Հայաստանում Մեծ Բրիտանիայի դեսպանը 2008-12 թթ.:

Կարեն Կարապետյան (ծնվ. 1963 թ.) - 2009 թ.՝ «ՀայՌուսգազարդ» ընկերության գլխավոր տնօրեն: Հետագայում եղել է Երևանի քաղաքապետ, Հայաստանի վարչապետ:

Վիգեն Սարգսյան (ծնվ. 1975 թ.) - 2009 թ.՝ ՀՀ նախագահի աշխատակազմի ղեկավարի տեղակալ: Հետագայում եղել է ՀՀ նախագահի աշխատակազմի ղեկավար, ՀՀ պաշտպանության նախարար:

Bookmark

Նախաձեռնություններ

Rock Aid Armenia / Ռոքն օգնում է Հայաստանին

Ջոն Դին Rock Aid Armenia (Ռոքն օգնում է Հայաստանին) նախաձեռնությունը հիմնեց 1989-ին: Նույն թվականի ամռանը Լոնդոնի Metropolis Sudios-ում ձայնագրվեց Deep Purple խմբի *Smoke on the Water*-ի «աստղային» տարբերակը. մասնակցեցին Queen, Pink Floyd, The Who, Deep Purple, Black Sabbath, Iron Maiden և այլ խմբերի երաժիշտներ: Բացի համատեղ ձայնագրությունից՝ ամեն խումբ առանց հոնորարի հատկացրեց մեկ երգ, և 1990 թ. թողարկվեց *Earthquake Album* ձայնասկավառակը, որի վաճառքից գոյացած բոլոր միջոցները տրամադրվեցին Հայաստանին: «Ռոքն օգնում է Հայաստանին» նախագիծը մեծ նշանակություն ունեցավ նաև այն առումով, որ շատերի համար լսելի ու ճանաչելի դարձրեց Հայաստանը: 2019 թ. հունիսին Երևանում հանդիսավոր կերպով նշվեց Rock Aid Armenia նախաձեռնության 30-րդ տարին:

Bookmark

Armenia Grateful 2 Rock / Հայաստանը շնորհակալ է ռոքին

«Մեդիամաքս» մեդիա ընկերությունը 2009 թ. նախաձեռնեց Armenia Grateful 2 Rock (Հայաստանը շնորհակալ է ռոքին) նախագիծը, որի հիմնական նպատակը Rock Aid Armenia (Ռոքն օգնում է Հայաստանին) նախաձեռնության մասնակիցներին երախտագիտություն հայտնելն էր:

ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը Rock Aid Armenia նախագծի ամենաակտիվ մասնակիցներին Պատվո շքանշանով պարգևատրելու հրամանագրերը ստորագրեց 2009-ի հուլիսին: Նույն թվականի հոկտեմբերին Ջոն Դին, Իեն Գիլանը, Թոնի Այոմին, Ջեֆ Դաունսը և Փեթ Քեշն այցելեցին Հայաստան: Այցի ընթացքում որոշվեց Գյումրիի 6-րդ երաժշտական դպրոցի համար նոր շենք կառուցել: Դրպրոցի դռները բացվեցին 2013 թ. սեպտեմբերին:

BookMark

1

Արարատի հակառակ կողմը

1985 կամ 1986 թվականն էր, 9-10 տարեկան էի: Զարենցի կամարի տակ էինք: Ամառային երեկո էր: Ծնողներիս հետ էի, մորաքույրս ամուսնու և դստեր հետ էր, տատս կանգնած էր մեկուսի: Նա լուռ նայում էր Արարատին, մեկ էլ ասաց.

– Ինչ մեղք է այս սարը: Գերի է մնացել այնտեղ:

Զարմացա, որ տատս լեռան մասին ողջ մարդու պես է խոսում: «Գերի» բառի իմաստը չգիտեի, նաև չէի հասկանում՝ «այնտեղ» ասելով ինչ նկատի ունի:

Դրանից երկու-երեք տարի անց մի տարօրինակ պաստառ նկատեցի: Վրան գրված էր «Վերադարձ դեպի Արարատ», սակայն Արարատի փոխարեն կարծես այլ լեռ էր պատկերված: Եկա տուն, պատմեցի հայրիկիս: Ասաց, որ Արարատն է, միայն թե հակառակ կողմից: Արարատի՝ հակառակ կողմ ունենալու «բացահայտումս» և՛ վախեցնող էր, և՛ գրավիչ: Մի քանի օր անց հայրս ինձ տարավ «Ռոսիա» կինոթատրոն՝ այդ ֆիլմը դիտելու*:

Դահլիճը մեծ էր, մարդիկ՝ քիչ. ցերեկային սեանս էր: Ֆիլմը երկար էր: Հիասթափվեցի: Սպասում էի, որ այդ «նոր», խորհրդավոր Արարատի բազմաթիվ կադրեր կտեսնեմ, բայց

* Վերադարձ դեպի Արարատ (շվեդ.՝ Tillbaka till Ararat) – 1988 թ. նկարահանված շվեդական վավերագրական ֆիլմ Հայոց ցեղասպանության մասին: Ֆիլմը պատմում է Հայոց ցեղասպանության ու հայերի աքսորի մասին, հայերի, որոնք երազում են վերադառնալ իրենց հայրենիք: (Ծանոթագրությունները՝ **new**mag-ի):